



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

535

83W
C-72

1892

Թօփլիկի Հայոց Հրատարակչական Ընկերութիւն

№ 53

O. H. ՇՄԻԴՅԱՆ

Մ Լ Ո Ւ Ա Ն



Թարգ. ուս. Անհով. ԲԱՐԵՎԱՐ

2004

ԹԻՖԼԻՍ
ՏՊԱՐԱՆ „ԱՐՈՐ“ Տ. ՆԱԶԱՐԵԴՅԱՆ
1892


Дозв. ценз. Тифлисъ 17-го июня 1892 года

Тип. „АРОРЪ“, Т. Я. Назарьянъ, Барятинская улица.

ՆՈՒՅՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԺԱԿԱՆ ԽՈՏՏՈՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՆԴԱՐՆԱ ՏԱՐՎԱԿԱՐԱՆ ԱՆԴԱՐՆԱ
28 ՄԱՅԻՍԻ 1919 թ.

Մ Հ Ո Ռ Ա Ն Ի Ն Գ Ց Ն Ե Լ Հ

I.



այրիկ, մայրիկ, լսիր, այս
ինչ ծվոց է գալիս. զնանք,
զնանք, մայրիկ, տեսնենք
այս ինչ է:

Այսպէս բղաւելով փոք-
րիկ Սաթիկը մօտեցաւ մօ-
րը, որ պատուհանի առաջը նըս-
տած՝ գիրը էր կարդում: Տիկին Սննան
վերկացաւ և գնաց դէպի այգին:

—Ո՞րտեղ է ծվում, հարցրեց մայրը:

—Այ, այստեղ, մայրիկ, ցանկի տակին:
Ցանկի տակից, իսկապէս, մի ողորմելի
ծվոցի ձայն էր գալիս. Սաթիկը վազեց այն
կողմը, և տեսաւ որ առուակի մօտ, խոտե-
րի մէջ, մի փոքրիկ կատուի ձագ չարչար-

ւում էր ու ծվում: Խոսն երեխ կատուիկի
համար ահագին անտառի նշանակութիւն
ունէր: Փոքրիկ արարածը հազիւ հազ կա-
րողանում էր ոտները փոխել նա շուտ-շուտ
սայթաբում՝ վայր էր ընկնում: Աէկ էլ տե-
սար—վախեցած՝ ճաղար աչքերը պրլրզում՝
կանգնում, կամ երբեմն էլ խոտերի մէջ
ցրիւ եկած ցախերին (Ճռնոտ) կամ բու-
սած եղեգնին՝ անզգուշաբար բիթը կպցը-
նում էր ու ցաւացնում:

—Մայրիկ, ի՞նչ խեղճ փիսիկ է, մեղք
է, ասաց Սաթիկը, վախենում եմ առուն
ընկնի, տանենք սրան տուն:

Փոքրիկ աղջիկը կուացաւ, որ կատուի-
կին բռնի, առաջուց հաւատացած լինելով,
որ մայրը բան չի ասիր: Սաթիկը ձեռքը
մեկնեց և բիչ էր մնացել որ բռնի, յանկարծ
կատուն խրտնեց, ականջները յետ տարաւ,
ֆշացրեց և յետ ցատկեց:

—Սպասիր, ես կրփորձեմ, ասաց մայրը
և կուացաւ ու միանգամից բռնեց չարածը-
ճի կատուիկին: Ինչքան էլ փիսիկը ֆշացրեց,
մլաւեց, ձգձգուեց, չըկարողացաւ տիկին
Աննայի ձեռքից դուրս պրծնել: Տիկինը փա-

թաթեց նրան թաշկինակի մէջ և տարաւ
սենեակը:

Սաթիկը ծկրտի տալով, մօր շուրջն էր



Քիչ էր մնացել, որ բռնի...

թռչկոտում: Երբ մտան սենեակը, դուռն
ու պատուհանը լաւ պինդ փակեցին և նոր
հիւրին վայր դրին գետնին: Կատուիկն իսկոյն
փախաւ մտաւ մի անկիւն և սկսեց օտարո-
տի կերպով իր շուրջը նայել:

— Սաթօ, զնա նրա համար խոհանոցիցը
քիչ կաթ բեր, տուր ուտի, նա շատ քաղ-
ցած կըլինի, ասաց մայրը:

Սաթիկը փազեց խոհանոցը և մի պնակ՝
կաթով լիքը՝ բերաւ դրեց կատուիկի առաջը:
Սա առաջ մէկ խրանեց, իսկ յետոյ, երբ
Սաթիկը հեռացաւ, կաթի հոտից գրաւուե-
լով, կամաց վիզը երկարացրեց հեռուից և
դունչը հասցրեց կաթին:

— Մայրիկ, տես, տես, ուտում է... կա-
մացուկ փափաց Սաթիկը:

Սաթիկը կռացած, ուրախ-ուրախ դի-
տում էր, թէ ինչպէս փիսօն շարունակ
իրա կարմիր լեզուն ներս ու դուրս էր ա-
նում՝ լպտելով. աչքերը ճպճպացում էր, ա-
գահաբար վռազում էր, փռշտում էր, բայց
էլի նորից ախորժակով ուտում... Ուտելու
ժամանակ, որ թաթիկները յանկարծ չէին
ընկնում կաթի մէջը, կատուիկը մի այնպէս
ծիծաղելի, ծաղրածու ձեռվ թափ էր ապիս
թաթերը, որ Սաթիկը բրբչոցից թուլա-
նում՝ մեռնում էր...

— Մայրիկ, ինչ ծաղրածուն է է... շատ
սիրունն է, ասում՝ ուրախանում էր Սաթիկը,

ձեռքերն իրար բում և ինքն էլ կուչ էր
գալիս կատուի նման:



— Մայրիկ, տես, տես, ուտում է...

Կատուն, երբ կերաւ կշտացաւ, նախ
առաջի և ապա յետի ոտերը ձգձգեց, ինքն

Էլ քաշըուեց, լպստորեց իրա դունչն ու
մարմինը, յետոյ պառկեց և իսկոյն մրափեց:

Սաթիկը շատ ուզում էր նրան մէկ
առնի ձեռքը, խտրտի...

—Մայրիկ, յատակը կատուիկի համար
կոշտ կը լինի, վեր առնեմ՝ ձեռքիս պահեմ...

—Չէ, չէ, Սաթօ ջան, ձեռք մի տալ
նրան, երբ նա քիչ մեր տանը կապրի, մեզ
կը լուսաբանայ, այն ժամանակ ինքը կըգայ
քեզ մօտ, կըբարձրանայ ձեռքիդ, թէ չէ հի-
մա դու նրա աչքը կըվախեցնես, և նա բո-
լորովին մեր տանից կը փախչի:

—Դէ լաւ, ես նրան ձեռք չեմ տալ
միայն մօտիկից նրան մտիկ կըտամ, քանի
գեռ քնած է, ասաց հանգստացած Սաթի-
կը և կամաց-կամաց մօտիկացաւ փիսօյին:
Կատուիկը յաճախ իր սուր ու դիք ա-
կանչները շարժում էր: Նրա դունչը կլոր
էր և գեղեցիկ, իսկ քիթը սպիտակ:
Փիսօն երկար ու կլոր բեխեր ունէր: Նրա
վիզն ու փորը քթի նման սպիտակ էին: Նա
ձգուել քնել էր և թաթիկներն ու պոչը թու-
լացած վայր էր թողեր: Սաթիկը նկատեց,
որ կատուիկի մաստերին ճանկեր կան, իսկ մա-

տերի արանքում փափիլիկ, մսոտ բարձիկներ:

—Մայրիկ, փիսիկիս անունը ի՞նչ գնեմ:

Մըռուան լաւ է չէ. նա չի մըռմնալու:

—Ի հարկէ, կըմըռմոայ, երբ Էլ մեզա-
նից չի վախենալ:

—Դէ լաւ, նրա անունը սրանից յետոյ

Մըռուան կըլինի, վճռեց Սաթիկը:



II.

Ամթիկենց տունը մի մեծ, գեղեցիկ այգու մէջ էր: Նրանք ունեին երկու սենեակ և մի խոհանոց, որի ճանապարհը բակովն էր: Այդ այգին կանոնաւոր ուղիներով բաժանուած էր. ուղիների երկու կողմից ստուերախիտ ծառեր էին անկած, իսկ այգու գանգրաւոր լորենիներին էլ խօսք չէր հասնիլ. մի խօսքով Սամթիկը իր մօր հետ այդ տան ու այգու մէջ՝ ամարանոցում ապրում ու զուարձանում էր: Ազատ ու կայտառ այս ու այն կողմն էր թոշկոտում: Մէկ էլ տեսար՝ Սամթիկը մտաւ խիտ ծառերի մէջ և մօրն է կանչում, պու... պու... կամ թէ վազում, թագնուում էր բարձր խոտերի մէջ և շունչը կտրած սպասում: Հենց

որ մայրը մօտենում էր, յանկարծ Սամթօն դուրս էր թոշումքրչալով, փաթաթւում մօրը ու վզիցը կախ ընկնում:

— Այ, դու չարաձձի, էլի թագնուել ես, որ ինձ վախեցնես, ասում էր մայրը:

Այս խօսքերից Սամթօն աւելի էր զուարձանում և այնքան ուրախանում էր, որ էլ չանդարտ ման գալը նրան բաւականութիւն չէր տալիս, թոշկոտում, վազվզում, ծիծոցում և ծվալով թոշնիկի նման երգում էր:

Չմեռը Սամթօյի մօր մօտ տղերք ու աղջկէրը էին գալիս կարդալու, մօր բանը խիստ շատ էր լինում, Սամթիկը կարօտ էր մնում նրա տեսքին, բայց ամառը մայրիկը նրանն է ունրանը, Սամթօն մօրից էլ չի հեռանում: Չմեռուայ բոլոր հոգար ընկնում էր դայեակի վրայ, խեղճ պառաւը շատ յաճախ Սամթիկի ձեռքից գանգատուում էր, թէ իրան շատ է ձանձրացնում:

— Դէ, այժմ ամառ է, չիմա իմ հանգստանալու ժամանակն է եկել, ասում էր դայեակ Նունէն, ես էլ իմ փոքրիկիս երեսը չեմ տեսնում ամբողջ օրը:

Այժմ դայեակը մինչև անդամ վիրա-

ւորուում էր, որ Սաթօն իրան թողած՝
ամբողջ օրը մօրը շուրջն էր պատում, և
իրա վրայ էսկի նայել էլ չի ուզում:

— Լաւ, գնա՛, գնա՛, դու էլ իմ աղջիկը
չես, մայրիկինն ես, ասում էր դայեակը
մնթռուտած՝ ակնոցը վեր քաշելով:


— Նանի ջան, նանի, ես քեզ էլ եմ սի-
րում, ասում էր Սաթօն և դրկում դայեա-
կին, բայց մայրիկին շատ է, շատ եմ սիրում:

— Հա՛, լաւ, սպասիր, մէկ ձմեռը գայ,
էլի ես կըքաղցրանամ, ասում էր դայեակը,
շոյելով Սաթիկի գլուխը:

Սաթօն այդ բոլորը պատմում էր մօրը,
թէ նանիկը շատ է բարկանում, որ ինքը
միշտ մօր մօնէ լինում, իսկ իրա վրայ ուշը
չի դարձնում մայրը միայն ժպտում էր ու
ասում:

— Նանիկը կատակ է, անում, քեզ նման
չարից ով չի ուրախ լինել, որ աղատուի...

Սաթօն շատ լաւ էր հասկանում, որ
մայրն էլ է այժմ կատակ անում, թէ մայ-
րը, թէ նանիկը իրան շատ են սիրում ու
հոգի են ատլիս իրա համար...



III.



ըռուանը շատ շուտ բարե-
կամացաւ Սաթօի չետ. ե-
րեք օր էլ շանցած, նա ինքն
իրան արդէն վազում էր Սա-
թօի կանչին. մէկ էլ տեսար
փիսիկը շտապ-շտապ օրօրուելով,
պոչը դիք ցցած, վազում է Սա-
թիկի մօտ, համնում է, թաթը խփում նրա
ձեռքին, հոտոտում և թաւալ տալիս գետ-
նին, շուռ ու մուռ անում, կամ մի թելի
կոճ կամ խցան գտած ժամանակը՝ զլորում
սենեակի մի ծայրից միւսը և ինքն էլ յե-
տեից վազվզում: Սաթօն զմայլած նայում է
ու նրա բերանի ջուրը գնում է... Մըռուանը
արդէն յոգնել է, պառկում է գետնին:



Սալթօն մօտենում
է, հանդարս զըր-
կում է նրան ու
նստում մի անկիւ-
նում կամ թախ-
տին։ Մըռուանը
թաթիկները ծա-
լած, աչքերը կի-
սախուփի, սկսում
է իրա մըռմոոցը..
մըռ...ո...ո...ո...ո...

Սալթօն ականջ է զնում, շատ է ուղում
հասկանալ, թէ ի՞նչ երգ է ասում փիսիկը,
բայց բան չի դուբս գալիս. Կատուի լեզուն
շատ գժուար է հասկանալ։

— Մըռուան ջան, այդ ի՞նչ երգ ես ա-
սում. հարցնում է Սալթօն, նրան բնահատ
անելով։

Մըռուանը լուռ, անբաւական ձեռվ նա-
յում է նրա վերայ, տեղը յարմարեցնում ու
պառկում, իսկ երգին վերջ տալիս. Սալթի-
կին թւում է, թէ կատուն իրանից նեղացել
է, սկսում է նրան շոյել, փաղաքշել։

— Լաւ, լաւ, Մըռուան ջան, էլ չեմ խան-
գարիլ, երգիր, երգիր, փիսօ ջան. փիսօն,
փիսօն...

Մըռուանը քիչ անցած՝ էլի իրա երգը
սկսում է և ընած-ընած պոչն աջ ու ձախ
շարժում։

Թէ հացի, թէ նախաճաշի, թէ թէյի
ժամանակ, Մըռուանը Սալթիկի անբաժան
ընկերն է, միշտ աթոռի վրայ, Սալթօնի կող-
քին պազած։

Երբեմն Սալթօն մոռանում է, որ նրա
համար բաժին չանի, փիսօն չանչիկը մեկնում
է ու կամաց-կամաց խփում Սալթօնն, կամ
չեց առանց սպասելու՝ բարձրանում է և
իրա բաժինը ամանից վեր առնում։

— Մայրիկ տես, Մըռուանն ինչը վեր
առաւ ամանիցը։

— Հա, դու նրան մոռացել էիր կերտ-
կրելու, ինքն իրա բանը տեսաւ։

— Տես, տես, նա էլի ուղում է վեր առ-
նի, ասում է Սալթօն և մի կտոր միս զնում
ամանի ծայրին. Մըռուանը բարձրանում է,
կանգնում յետի ոտների վրայ, թաթիկը

մեկնում է, առնում տուած կտորը ու
չափի... դնում բերանը:


Երբ Սամթօն այգին է զնում, Մըռռանք
յետևից է վազում. Ճանձ է բռնում ուսում.
Թռչունների յետևիցն է ընկնում ու մաղլցում
ծառերը, իսկ Սամթօն կատարեալ դայեակի
նման՝ նրան պահպանում ու հսկում է:

— Մըռռան ջան, այդ կողմ մի գնալ, առուն կընկնես, բղաւում է Սաթօն. Էլի ծառբարձրացածր, վայր կընկնես, թաթիկներդ կը ջարդուեն: Ի՞նչ ես այդքան թռչնիկների յետեից ընկնում, քաղցած են, թող կերակուրորան... բաս, նրանք մեղք չեն...

Սըռուանը նայում է նրա վրայ և պատսսխանի փոխարեն միայն կամաց մըռուացնում է։ Սաթօն կարծում է թէ կատուն հասկացաւ իր ասածը, և կարծես ասում լինի ել չեմ անիլ… Բայց որտեղ, մի երկու րոպէ չանցած, ելի իրա խեղկատակութիւնների յետելիցն է ընկնում և յանկարծ մի այնպիսի բան է անում, որ Սաթիկը՝ ել ինչ բարկանալ, ինչ բան, ծիծաղից մեռնելով վազում է մօր մօտք, որ իրա փիսիկի հարագիտութիւնը պատմի։

ՍԱԹՈՒ ԵՀ. ՄԸՆԴՀԱՆԻ ԴԱՍԵՐԸ

IV.



 այրիկը խոստացել էր՝
ամառը Սաթիկին կար-
դալգրել սովորացնել. Նա
հիմա էլ փոքր չէ, այս մա-
յիսին նրա եօթ տարին լրա-
ցել է:

**Սիօպաւոտը նա
դարձաւ մօրը,
Մայրիկ, ապա էլ ե՞րբ ենք սկսելու,
չե՞ որ...**

— Դեռ ժամանակ շատ կայ, ձմեռն էլ
կարելի է, դու այնքան զբաղուած էիր բո
Մըռուանի հոգսերով, որ ես իսկի չեի եւ
ուզում միտքդ զցեմ, քեզ խանգարեմ:



—Զէ, մայրիկ ջան, չէ, հիմա լաւ է, իմ
Մըռռանը խելօք է, նա ինձ ոչ թէ չի խան-
դարիլ, այլ կ'օգնի:

—Լու օղնական ես գտել, ասաց մայրը
ծիծաղելով:

—Դէ, կը տեսնես, մենք նրա չետ մի-
ասին ինչպէս ենք կարդալու:

—Զէ, դու բոլոր ուշբդ ու միտքդ կը
տաս փիսօին և անհրաժեշտ բանն էլ քեզ
համար դժուար կը թվայ. աւելի լաւ է
թողնենք, որ նա իրա համար խաղ անի:

—Մայրիկ ջան, հոգիս, թող, թող
Մըռռանն էլ չետու կարդա, հաւատա, ուշբս
նրան չեմ տալ:

—Այ, յիմար, նա կատու է, նա ի՞նչ է
հասկանում մեր լեզուն, նրա սովորածը ի՞նչ
կը լինի:

Մաթօն վիրաւորուեց:

—Հա, ինչպէս չէ... «նա ի՞նչ է հասկա-
նում», — չէնց ի՞նչ որ ասում եմ» հասկա-
նում է:

Մաթիկին համոզեն արդէն դժուար էր.
վերջ ի վերջոյ մայրը ստիպուած էր Մըռ-
ռանին էլ ընդունել աշակերտ...

Մինչև ճաշը Սաթօն կատուիկի չետ
գնացել, նստել էր մօր մօտը և միասին դաս
էին առնում: Մըռռանը պոչը փուած՝ սե-
ղանի վրան, այնպէս լուրջ նստել էր, որ
կարծես իսկապէս շատ բան էր հասկանում:
Նա կամ գիրքը, կամ գրիչն ու թուղթն էր
հոտոտում, կամ թաթիկով այս ու այն բանն
էր շարժում, իսկ Սաթօն շուտ-շուտ աշ-
երը գողառուկ՝ նրա վրան էր գցում:

Սաթօն մեծ եռանդով կպաւ ուսման
և ժամանակը մինչև ճաշը համարեա ան-
ցաւ: Դասամիջոցներին նրանը երկուար փա-
զում էին այգին, իսկ վերջին դասին, երբ
մայրը Սաթօի համար սկսեց մի հերիաթ-
կարդալ, Մըռռանը ննջաց, ննջաց ու ընեց:
Սաթօն իր լսածը պատմեց մօրը և երբ
պարապմունքը վերջացաւ մօր խօսքերով՝
թէ «այսքանը բաւական է», Սաթօն նոր
նկատեց, որ Մըռռանը ընած է: Նա իս-
կոյն բոթելով, արթնացրեց նրան.

—Այ դու ծոյլ ի՞նչ ծոյլ Մըռռան ես,
գեռ ես քեզ գովում էի, ամօթ չէ^թ, այս-
պիսի լաւ պատմութեան ժամանակ դու^թ
քնում ես:

Մըռռանը բարկացաւ, վեր ցատկեց,
Փշացրեց, մլաւեց ու փախաւ:

Այս առաջին անքառականութիւնն էր
երկու բարեկամների մէջ, բայց այդ էլ եր-
կար չը տեսեց: Սաթօն թելի ծայրին
թղթի կտոր կապեց և Մըռռանին յետե-
ւիցը գցած՝ սկսեցին սենեակում վաղ-
վրզել:

Շուտով Մըռռանն այնքան ընտելացաւ-
դասերին, որ հէնց Սաթօն գրիչը վեր
կ'առնէր, մէկ էլ տեսար Մըռռանը պուպուզ՝
սեղանի վրան: Մըռռանը տեսնում էր, որ
ինչքան ջանք էր թափում Սաթօն՝ գրիչը
թղթի վրայ առաջ ու յետ տանելիս, ինքն
էլ մէկ-մէկ թաթովը շօշափում էր կոթը:


— Սաթօ ջան, ընկերդ քեզ օգնում է
որ լաւ գրես, ծիծաղելով ասում էր մայրը:

Երեկոները Սաթօն վեր էր առնում
գրիչը և Մըռռանին դաս էր տալիս:

— Դէ, նայիր, Մըռռան ջան, այս ինչ
է. նաևա. իսկ այս— Արօ, Արօ,
զիզի, կակա:

Մըռռանը շարժում էր գլուխը, հե-

տեելով Սաթօն և գիրքը հոտոտելով:
— Դէ, այժմ էլ լսիր, ես քեզ համար



Մէկ էլ տեսար Մըռռանը՝ պարզուց սեղանի վրայ...:

մայրիկի կարդացած հէրիաթն եմ ատելու,
չը մոռանաս, հա. մայրիկը էզոց քեզ հարց-
նելու է...

Մըռուանը լսում էր բոլորը, թէ պատմութիւնը, թէ խնդիրներն ու դասը. իսկ Սաթօն շարունակ ափսոսում էր, որ ինքը կատուի լեզուն չի իմանում, ապա թէ ոչ Մըռուանը նրա բոլոր հարցերի պատասխանն էլ կը տար. նա մի խելօք կատու է, բայց միայն խօսել չի կարողանում:

Մըռուանը, բացի այս բոլորը, ուրիշ դասեր էլ ունէր. Սաթօն նրան սովորացնում էր յետի ոտերի վրայ կանգնելը, ձեռք տալը, կոտն վրայով ցատկելը, փայտի կրտորը ձեռքին, սլահապանի նման կանգնելը. սուտամեռնուկ տալը և իսկոյն կենդանանալը, տիկինի փոքրիկ սոյլակը բաշելը... Մըռուանը շատ էլ չէր սիրում այդ դասերը, միշտ աշխատում էր մի որ և է ձեռվ ծլկել-փախչել... բայց Սաթիկի ձեռքից ուր կը փախչէ. Սաթօն իսկոյն նրան գտնում էր բերում, մէկ լաւ ամաչացնում և փայտը ձեռքին՝ մօտը կանգնացնում:

Երեք շաբաթից յետոյ Մըռուանն արդէն կարգին սովորել էր թէ կոտն վրա-

յով ցատկելը, թէ յետի ոսների վրայ կանգնելը, թամբ տալը, բայց սուտամեռնուկ տալուց շատ խուսափում էր. ակամայ շարժում էր ականջները և պոչը զարկում գետնովը:

—Մեռիր, բոլորովին մեռիր, պահանջում էր Սաթօն,—այդ ինչպէս ես մեռել, որ պոչդ շարժում է, մեռիր...

Մըռուանն արդէն բոլորովին ձանձրացել էր, վերկացաւ և փախաւ:

—Լաւ, բաւական է, բաւական, մէջ էր մանում մայրը. դէ ինչ որ հրամայում էիր, բոլորն սնում է, էլ ինչ ես ուզում. Այդքան էլ խստապահանջ չեն լինիլ:



V.



ուիս ամսի տաք օ-
րերից մէկն էր. արևը
խիստ այրում էր:
Ճանձերը մընչեւ անգամ տաքից
կպչում էին պատերին, շուաք
տեղ էին որոնում: Կենդանիների,
մարդկանց մասին էլ ի՞նչ ասեմ:
Տան գամբու շանն իր բուրդը
այս տաքին շատ էր նեղացնում: Խեղ-
ճը լեզուն հանած՝ մտել էր բոյնն ու
հազիւ հազ շունչ էր քաշում: Սենեակի
փոքրիկ շունը փախել, մտել էր մտուանը.
Ներքնայարկի միւս կողմում թխրսկանն իր
ճուտերով տեղ էր բոնել. աղաւնիները տա-
նիքի տակ ննջում էին. խել բաղերը

վաղուց ջուրն էին մտել և ուռենիների հո-
վանուց չեին չեռանում:

Տաք է, խիստ տաք է, բոլորի շունչն էլ
բռնւում է: Սամթօն իր գայեակի չետ ծմակը
զնաց զբունելու: Այս անգամ էլ, ըստ սո-
վորականին, նրա գրկումն էր Մըռուանը, որ
այժմ բաւական մեծացել էր: Կտառի մոր-
թին աւելի թխացել, գեղեցկացել, փայլուն
գոյն էր ստացել, խել մոյզ, կարմրագոյն շեր-
տերն ուղիների նման, աչքի էին ընկնում: Մըռուանի
աչքերը կանաչագոյն փայլով և
աչքի պտուղը սև սամթի պէս շողում էին.
խել սպիտակ գունչը, փորն ու թամթիկ-
ները ձնի պէս պապղում էին արևի գեմ:

— Իմ Մըռուանը սպիտակ կրծկալ ու
թեքեր է հագել ասում էր հպարտութեամբ
Սամթօն. նա Մըռուանի վզին մի կապոյտ
ժապաւէն էր կապել փողպատի ձեռվ:

Սկզբում փիսիկին այդ դուր չէր գալիս.
մի առ ժամանակ Մըռուանը շատ էր աշ-
խատում կրծոտելով, չանգուտելով, գլուխը
այս ու այն կողմը թափահարելով վզիցը
հանել, բայց չըկարողացաւ. ուստի վերջ
ի վերջոյ հաշտուեց իր վիճակի չետ: Այժմ

Սալթօն ամեն առաւօտ իր պարտքն էր համարում ուղղել և կարգի դնել Մըռռանի փողպատը:

— Նանի ջան, տես, իմ կատուն ի՞նչ սիրուն է, ասում էր Սալթօն շոյելով նրան:

— Հա, աղաւնեակս, այնքան կերակրել ես, որ չէնց իմանաս Զատկուայ համար չաղացրած դոճի լինի, ասաց կատակով նանին:

— Ի հարկէ, լաւ եմ կերակրել, ես իմ Մըռռանիցն էլ երբէք չեմ բաժանուի: Նաշխունս է, ինձ համար նա շատ լաւն է, ասաց ու համբուրեց Մըռռանի զլուխը: Հասան ծմակը. դայեակ Նունէն գուլքան ձեռքին նստեց ծառի շուաբում, իսկ Սալթօն թողեց Մըռռանին, որ նա փափուկ խոտերի միջին խաղայ և ինքը՝ սալակը ձեռքին՝ զնաց ձորակը մորի քաղելու:

Սյդ միջոցին, հեռուից, երկու տղայ մի մեծ շուն առաջը գցած, դուրս եկան ծառերի միջից: Նրանք ոչ Սալթիկին և ոչ էլ դայեակին էին տեսնում: Մըռռանը թոչկոտելիս յանկարծ նրանց աչքովն ընկաւ:

— Տես, տես, Գաղէն, այն ի՞նչ բան է:

— Ուր է:
— Այ, խոտերի միջին, աղուէս է. չէ, չէ,
սկիւռ է...

— Ըը՛լ. ի՞նչ սկիւռ, ի՞նչ բան, կատու է:
— Ալաբաշ, Ալաբաշ, հրէդ... ըը՛ս, ըը՛սս...
Ալաբաշ, ըը՛սս...

— Բոնիր, բոնիր կատուին, ասաց Տեսպանն ու շանը բաս տուաւ կատուի վրայ:

Շունը կայծակի նման թուաւ Մըռռանի յետեկից և երկումն էլ թագնուեցին ծրմակի խորքում: Տղէրքը կանգնած՝ հրհուում էին:

— Ամա, ի՞նչ որս է, ասում էր Գաղէնը:

Սալթիկի լեզուն վախիցը բոնուել էր: Նրա ձեռքերը թուլացան և սալակը զորւեց խոտերի մէջ. իսկ Սալթօն պլացած, սառած մնացել էլ. նա տեսաւ, որ էրա սիրելի Մըռռանը կորաւ զնաց և գուցէ շունը նրան բոլորովին պատառոտի: Նաքար կտրածի նման կանգնել էր: Բայց վիշտը, բարկութիւնը, վիրաւորանքը միասին նրան այնքան շարժեցին, որ առաջուայ թոյլ վախկոտ Սալթօն պատրաստ էր կտոր-կտոր

անելու այդ տղերանց։ Նա բարկութիւնից տաք երկաթի նման կարմրած՝ աչքերը կայծակին տալով համարձակ մօտեցաւ նրանց։

—Այ, անպիտան, չար տղայ, բղաւեց
Սաթօն Տեսպանին։

Յորդ արտասուքը խեղդեց Սաթօի ձայնը։
Սկզբումը տղան չը հասկացաւ՝ թէ բանն ինչումն է. զարմացած՝ սիրոն աչքերը չոեց և բերանը բաց՝ յետ ու յետ գնաց. յետոյ քիչ ուշքի եկաւ և հասկացաւ, որ իրան է հայշոյում, ինքն էլ նրա վրայ բղաւեց.

—Դու ով ես, ի՞նչ իրաւոնք ունես ինձ վրայ բղաւելու. ես իսկի քեզ մտիկ տալ չեմ ուզում։

Դայեակ Նունէն ծանր-ծանր, դժուարութեամբ բարձրացաւ նստած տեղից ու շրնայած, որ գուլքի թերն էլ խճառեց, շտապեց նրանց մօտ. նա բոլորը տեսել էր։

—Այ, կոռարար, չար անպիտաններ, դուք ի՞նչ իրաւոնք էք ուրիշի կատուների յետելից ընկնում, իմանում էք ես ի՞նչ կանեմ ձեզ. ես ձեզ ճանաչում եմ. սպասեցէք...

Տղաներից մեկը լոեց, ընկճուեց, իսկ

միւսը ժպտաց և ձեռքի փայտը ձօձելով՝ արհամարական ձեռվ չափեց ոտից մինչեւ զլուխ դայեակ Նունէին։

—Դու ի՞նչ ես մեր մէջ խառնում, քեզ ով կանչեց. գնա, քո բանը չի։

—Ի՞նչպէս թէ իմ բանը չի, ը՛լ... դուք իմ Սաթօի սիրու կոտրում էք, իսկ ես իրաւոնք չունիմ խառնուելու. անպիտաններ, գեռ խօսում էլ էք, փայտը վեր կառնեմ ու ես ձեր էն, էն...

Պառափ շունչը կտրում էր... իսկ տղերը հրհուում ու ծաղրում էին նրան։

Սաթօն տեսաւ, ինչպէս փոքրիկ տղան մինչեւ անգամ բուռնցքը սեղմած սպառնալով շարժեց. իսկ մեծն արհամարական ծիծաղն երեսին՝ շուռ եկաւ իրանցից։

—Նանի ջան, գնանք, գնանք, ասում էր Սաթօն։ Նա էլ լաց չէր լինում, այլ դայեակի ձեռքիցը բռնած յետ ու յետ էր քաշում, — գնանք Մըռուանին պտունք, նրանք չար ու անպիտան են... Սաթօն առանց նրանց վրայ նայելու՝ այնպէս հպարտ հպարտ անցաւ, որ տղայըն ակամայից վիրաւորուեցին։

Գագենը շվացրեց և իսկոյն Ալաբաշն

առաջները դուրս եկաւ, բայց Մըռռանը չը կար:

Տղէրքն անցան գնացին: Սաթօն սկսեց թփերի տակը մտիկ տալ. Էլ ի՞նչ տեսակ անուններով ասես, որ նա չը կանչեց փիսիկին...

Մըռռանը չքացել ու չքացել էր:

—Չը կայ, էլ ո՞րտեղ պտռենք. վայ, ի՞նչ եմ անելու ես:

—Ի՞նչ պէտք է անես. գնանք տուն, կարելի է նա ինքն իրան գայ:

Սաթօն չը հանգստացաւ. նա դեռ երկար ժամանակ կանչում էր: Վերջը՝ որ չը զտաւ կատուին, ուղերդուեց տուն, որ մօրիցը մի խորհուրդ հարցնի:

Արտասուրից խեղդւող Սաթօն յանկարծ տեսաւ, որ այգու ծայրից Մըռռանը թռչկոտելով վազում է դէպի նա, և աչանքացը դուրս եկաւ. Սաթօն աչքի տեսածին չէր հաւատում:

—Մայրիկ, այդ ի՞նչպէս է պատահել սա ո՞րտեղից եկաւ տուն:

—Աբա, դու կարծում էիր՝ թէ կորել

է: Վաղուց է, կէս ժամ կը լինի, մէկ էլ տեսայ գզզզուած ներս թռաւ պատուհանից ուղիղ իմ գոզա:

—Մըռռան ջան, հոգիս, սիրունիկս, ասում էր Սաթօն՝ համբուրելով Մըռռանի թաթերը, դունչն ու ականջները. —քնքուշին կըս... Սաթօն ուրախութիւնից հազիւ հազ կարողանում էր հասկացնել, թէ բանն ինչումն է:

—Այդ ում որդիքն էին, նանիկ, դուք նրանց ճանաչում էր:

—Ինչպէս չէ, հարեւանի որդիքն են, այնպէս չարն են, որ էլ ի՞նչ ասեմ:

—Հը... ափսոս... նրանց մայրը չօ շատ լաւ կին է:



VII.



յս գեպքից յետոյ՝ Սաթօն
շարունակ մի բանի օր Մըռ-
ուանի հետ էլ զրօսանքի չէր
գնում։ Խնչքան նանիկը նրան
յորդորում էր, բայց Սաթիկի
մշտական պատասխանն էր թէ՝

— Այստեղ՝ այգումն էլ շատ լաւ է.
անտառում, ով գիտէ, նանի ջան, այն տը-
ղերըն էլի Մըռուանի յետելից կ'ընկնեն...


Մըռուանն իր ամենօրեայ դատերը շա-
րունակում էր։ Նրա ուսումնարանը պար-
տէղի ցանկապատի մօտ մի բաց տեղ էր։
Ամեն օր էլ նա յետի ոտների վրայ էր կանգ-
նում, թաթ էր տալիս, մեռնում, նորից
կենդանանում..

Մի օր էլ երբ Սաթօն գրաւուած պա-
րապում էր իր աշակերտի հետ, ամենեին
չէր նկատում, որ հարևանի որդիները՝ Տե-
պանն ու Գաղենը՝ կամաց-կամաց մօտիկա-
ցել, կանգնել էին ցանկապատի միւս կող-
մումը և նայում էին։ Սաթօն սկզբում չէր
նկատում, բայց յանկարծ, երբ աչքն այն
կողմը դարձրեց, նրանց տեսաւ... Տղերը
հրհռացին ու փախան։

Սաթօն իսկոյն գրկեց Մըռուանին, լաց
լինելով վազեց մօրը գանգատուելու, թէ
այն տղերը էլի գալիս են, իրա Մըռուանին
տանելու։

— Մենք հօ չենք կարող արգելել որ
նրանք մեր այգու մօտովը չանցնեն. մնում
է որ գնամ նրանց մօրն տաեմ. Է՞ս, այդ էլ
շարժէ, նրան այդ բանը վիշտ կը պատճա-
ռէ։ Ապրի խելօք աղջիկս, լաց մի լինիլ։—
Դէ որ տեսնում ես նրանք գալիս են, դու
էլ հեռացիր, ուրիշ տեղ խաղարա. Հա, խե-
լօքիկս, հա, սուս արա։ Սաթօն շատ լաւ
հասկանում էր այդ բոլորը, բայց ինչ անէր,
որ իրան վիրաւորում էին. ինչու չէր կարելի
նրանց արգելել. չէ որ երբ մայրիկն իրան

մի բան է հրամայում, ինքն առանց մի խօսք
աւելացնելու կատարում է, ուրեմն ինչու



Քովից Մըսունին, ոց լինում վազեց մոր գովաստություն...

Նրանք մայրիկին չը պիտի լսեն...

Սալթօն թողեց այդ տեղը և սկսեց
ցանկապատից չեռու՝ այդու միւս ծայրումը

խաղալ: Բայց տղերքն այնտեղ էլ էին գալիս, ցանկից նայում ու փախչում:

—Ո՞սց չէ, չէսց իմանում էք իմ կատուս կը տամ ձեզ... չէ... ասում էք ինքն իրան Սալթօն ու գոզնոցի տակ թագյունում Մըսուանին:

—Տես, տես, Գագէն, այդ աղջիկը վախենում է, որ կատուն ձեռքիցը խլենք,
տես գոզնոցով ինչպէս է ծածկում:

Սալթօն վիրաւորուեց, իրան կորցրեց.
տղերքը նրան ցոյց էին տալիս մատով մէկ մէկու ու ծիծազում: Սալթօն չէր իմանում՝ ուր փախչէր: Մենակ այգին էր նրա համար ազատ մնացել, այն էլ անկարելի դառաւ: Դրանից յետոյ Սալթօն ժամերով նստում էր սենեակումը և զրօսանքից իրան էլ էր զրկում, Մըսուանին էր: Մըսուանին այս նոր կարգ ու կանոնն ամենաին դուր չէր գալիս, նա շուտ-շուտ դուրս էր թռչում այգին ու մլաւոցով Սալթիկին ևս հրաւիրում:

—Մըսուան ջան, դուրս մի գնալ: այնտեղ չար տղերք կան, տես Ալաբաշն այնտեղ է, եկ սենեակը: Այս անգամ Մըսուա-

նը նրան չը լսեց:—Մէկ երկու անգամ այսպէս դուրս եկաւ և վերջը սովորեց մենակ զբօնելու: Սաթօն ստիպուած էր թոյլ տալու...

—Բան չը կայ, Սաթօ, չիմա ըո կատուն կարգին մեծացել է, տան ճանապարհը լաւ ճանաչում է, չի կորչի: Մի օր Մըռռանն առաւօտից գնաց այգին և էլ յետ չեկաւ: Սաթօն նախաճաշին էլ կէսօրին էլ շատ սպասեց, երեկոյեան թէյի ժամանակն էլ անցաւ, բայց Մըռռանը չը կար, որ չը կար: Սաթօն էլ չէր իմանում ինչ անի. էլ տեղ չը մնաց, որ չը պտտի, դուրս եկաւ ճանապարհը, գնաց անտառը, կանչեց-կանչեց, բայց Մըռռանը չերեւաց: Երկրորդ օրն էլ Սաթօն Մըռռանին շատ սպասեց... էլի ոչինչ չը դուրս եկաւ: Սաթօն շատ էր դարդ անում. նա լոռել, դունատուել էր, ախորժակն էլ մինչեւ անգամ կորցրել էր, բան չէր ուտում:

—Եօ, Սաթիկ, բաւական է, արժէ՞ մի կատուի համար այդքան դարդ անել, միսիթարելով ասում էր մայրը,—կարելի է որ նա դայ. իսկ եթէ չի դալ, մի նորը կը բե-

րենը, էլ աշխարհըումն կատու չը կայ:

—Ես ուրիշը չեմ ուզում, կամացուկ ասաց Սաթօն, իսկ արտասուքն արտեանունքներից պատրաստ էին գողդողալով թափուելու.—իմ Մըռռանիսնմանն էլ որտեղից եմ գտնելու, խեղճ, խեղճ Մըռռան, ով գիտէ Ալաբաշի ձեռքն ես ընկեր: Սաթօն արտասուքն էլ չը կարողացաւ պահել, ընկաւ մօր կրծքին ու չեկեկաց...

Մայրը փաղաքշելով՝ ձեռքը Սաթօի զլիսին էր բառում և չէր իմանում թէ՝ ինչպէս նրա սիրան առնէր: Նանիկն էլ սենեակի միսս անկիւնումն էր աչքերից արտասուր թափում: նա դուրս էր գալիս այգին, դրառում ամեն ծակ ու ծուկ մաիկ էր տալիս, բայց կատուն չը կար ու չը կար: Մի օր էլ կէսօրից յետոյ՝ դայեակ նունին գնաց ու էլ չեկաւ...

—Դէ, պառաւն որ գնաց կատուի յետեւից, մինչեւ չը գտնի՝ էլ ձեռք չի բաշիլ ու տուն չի գալ, ասում էր խոչարարունին:

Սաթօն չէր իմանում սրտի նեղութիւնից՝ ուր գնայ. ամեն մի առարկայ, ամեն

անկիւն Մըռուանն էին նրան յիշեցնում։ Դասերն էլ անօգուտ էին անցնում, այնպէս որ մայրը նրան արձակեց, որ միւս օրը հանգստացած կը լինի և թարմ մարով լաւ կը պարապի։ Սաթօն պատուհանի առաջ տխուր նստել էր. նրա աչքին բան չէր գալիս, նստել էր ու գոզնոցի ծալքերով խաղում։ Մէկ էլ յանկարծ՝ սենեակի դուռը բացուեց ու նանիկը հեալով, կարմրած՝ կրակ կտրած թռաւ ներս։

— Զէի ասում... ախր ես իմանում էի... էլ ուրիշ ով կանէր...

— Ի՞նչ է պատահել, ի՞նչ է... նանիկ հանդարտիր ու մի կարգին պատմիր։

— Տեսամբ, որ կատուն նրանք են առըել, էն... էն... էն... չարերը...

— Ո՞վ, ում մասին ես խօսում։

— Մէր հարեւանի տղէրը, էն չարածմի երեխայըն են տարել։ Ծառաների բոլորի ճաշը տուեցի, ասում եմ, ուր է, տուէր ինձ մեր կատուն, մեր Սաթիկին էլ ջան չը մնաց. տարէր, տարէր ինձ ուղիղ տիկնոջ մօտ, ես ուզում եմ նրան՝ իրան տեսնել ու հասկացնել, թէ բանն ին-

չումն է։ — Իսկ այն անպիտաններն ինձ վըրայ ծիծաղում էին, թէ տեսէր այս պառաւին, ի՞նչ է երեխայի խելքին ընկել... ը՛չ... նրանք էլ մարդիկ են էլի...

— Նանի, նանի ջան, գու Մըռուանին որտեղ տեսար, հարցնում էր՝ ուրախացած Սաթօն։

— Ես մտածում էի, թէ ով կարող էր տանել կատուին։ Անցեալ օրը մէկ տկան-ջովս ընկաւ, լսեմ տեսնեմ՝ շատ են հիացած քո կատուով. ուր գնացին, ես էլ չետեւեցի. նրանք գնացին մտան մի մեծ քարաշէն, շըեղ ամարանոց տուն. ներս մտնեմ ու տեսնեմ՝ աղախինն այնտեղ բակումը կանգնած է ու ձեռքին Մըռուանին բռնած. բերել էր, որ կերակրի։ Ես վրայ պրծայ, թէ՝ այս կատուն մերն է — նրանք չէին տալիս, թէ մեր ի՞նչ գործն է, ձերն է, թէ ումն է. այս մեր պարոնի երեխաներն են բերել մեր բանը չի, ուզում ես գնա, իրանց հարցրու, ումն է կամ որտեղից է։ Ասում են ու իրանք հրհուում և ծիծաղում։ Ամօթ չէ, չեն ամաչում, գետինը չեն մտնում ձեր պարոնի երեխաները, գնում են՝ ուրիշի կատուներն

Են գողանում. թողէք, թողէք, գնամ ես
ինքս տիկնոցն իրան ասեմ.. Բայց նրանք
դուռն երեսիս փակեցին ու գնացին. ես
մնացի շուարած: Այս ի՞նչ է, հօ չենք թող-
նելու այնպէս մնայ, տիկին, դուք ինքներդ
գնացէք, ձեզ չեն համարձակուիլ չը
թողնել:

—Հա, մայրիկ, հա, դու գնա, գնա
Սըռուանիս առ, բեր, ազաչում էք Սաթօն,
նա իմն է, ի՞նչպէս կարող են չը տար:

Տիկինը մտքի մէջ ընկաւ:

—Լաւ, Սաթիկ, գնանք միասին:
Շուտով մայր ու աղջիկ պատրաստուե-
ցին ու գնացին հարեանի տունը:



ՀԻՒԱՆԴԱՀԱՅՐ

VIII.



Կարեւանի տունը մի մեծ շքեղ,
աշտարակներով շրջապատուած
շինութիւն էք, պատշգամբները մի
կողմից, ցանկապատները միւս կող-
մից: Որ կողմը շուռ էիր գալիս, անուշա-
հոսութիւն էք բուրում, ել վարդ ու յաս-
միկն որն է, մեխակն ու շուշանն որը: Այ-
դու ուղիները կարմիր աղիւսի մանրուք էք շաղ
տուած, իսկ հեռուից արծաթափայլ լճակը
մաքուր հայելու պէս պսպղում էք: Լճի
մէջը նաւասալ ու մի քանի մանր մակոյկ-
ներ կային: Տան միւս կողմումը, այգու
մէջը մի մեծ հրապարակ կար մարմնամար-
զական գործիքների համար: Սաթօն մտքով
շատ չեռու էք թուել, գնացել այս տունն

ու պարտէզը, այդ բոլորը յիշեցնում էին չէրիաթների մէջ լածները. նա երևակայում էր, թէ չէնց չիմա դուրս է գալու նրանց առաջ չէրիաթների մէջի իշխանուհիներից մէկը, զարդարուած ոսկով և ակնեղէններով։ Սաթօն և վախենում էր և՛ անյարմար դրութեան մէջ էր զգում իրան. բայց նա շատ զարմացաւ, երբ փոխանակ իշխանուհու, դուրս եկաւ ամենահասարակ հագուստով մի կին։ Տանտիկինն արդէն տարիքն առած կին էր, սեւ շալէ հագուստով, առանց զարդարանքի. «սա էլ հօ մայրիկիս նման է», մտածեց ինքն իրան Սաթօն։

— Ներեցէք, քոյրիկ, որ ձեզ նեղութիւն եմ տալիս, ասաց Սաթօի մայրը և պատմեց դործի էռթիւնը։

Մինչդեռ մայրը Մըռուանի պատմութիւնն էր անում, Սաթօն շուրջը դիտելով էր զբաղուած։ Սյդ կնոջ դէմքը նրան բարի էր թւում, միայն շատ գունաթափ էր և տիսուր. կարծես մէկ միտք տանջում ինէր տիկնոջ, ձեռքերը մանր-մանր։ Սենեակի սարք ու կարգը շատ գեղեցիկ և թանկագին էր երևում։ Սաթիկին դուր չեկաւ,

կաչ կարասիքի շատութիւնը. սենեակի մէջ-տեղերքումն էլ ինչ որ մանր գահաւորակ-ներ էին դարսած, անկիւններում մանր սեղաններ, դարակ ու նստարաններ, որոնց վրայ յաղճապակեայ պնակներ, տիկիններ, ամանեղէն էր շարուած։ Պահարանի ապակու յետեկց բազմաթիւ արծաթի անօթներ ու ամաններ էր երևում. սեղանների վրայ մեծ մեծ լամպեր էր դրած, իսկ առաստաղից մի գեղեցիկ բիւրեղի ջաչ էր կախ արած։ Սաթօն տեսաւ որ այստեղ ամենելին ոչ խաղալ կարելի է և ոչ վազվզել, մտածեց որ իրանց տունը սրանից լաւ է. այստեղ, որ կողմ շուռ գաս, մի բանի կը կպչես ու կը կոտրես...

Մայրիկը վերջացրեց իր պատմութիւնը, հարեւանուհին բոլորովին զարմացած էր մը-նացել իր որդիկերանց չարութիւնների վրայ։

— Իսկ նրանք հաւատացնում էին ինձ, թէ այդ կատուն փողոցումն են գտել։

Սաթիկին դուր չեկաւ, որ մայրիկն այդքան ներողամտաբար պատմեց այդ տղաների արարքը. եթէ ինքը պատմելու լինէր, անհամեմատ լաւ նկարագրած կը լինէր։ Սյդ պատճառով հարեւանուհին շատ թեթև բար-

կացաւ տղաների վրայ, մինչդեռ նրանք տւելիին էին արժանի... Բայց վերջի ի վերջոյ էլի ոչինչ, հարևանուհին խոստացաւ կատուն վերադարձնել: Սամթօն շատ բախտաւոր էր զգում իրան:

Չանգը տուին և ծառան ներս մտաւ:
—Այն կատուն բերեք, հրամայեց տանտիկինը:

Ծառան գնաց, երկար ժամանակ չէր վերադառնում: Վերջապէս եկաւ, բայց... առանց Մըռռանի:

—Ի՞նչ եղաւ, հարցրեց տիկինը:
—Վարսենիկը շատ է լաց լինում: Նրանէց կատուն անկարելի է առնել:
—Զեզ էլ աղջիկ ունէք, հարցրեց տիկին Աննան:

—Այն, իսկողաւ աղջիկս արդէն հինգ տարի է՝ չիւանդ է և ման զալ չի կարողանում, տխուր-տխուր ասաց տանտիկինը:

Դուռը բացուեց և պառաւ դայեակը, մի փափուկ կառքի մէջ նստացրած՝ ներս բերաւ չիւանդ աղջկանը: Խեղճը լլար, դալ կացած երես ունէր, հազիւ տաս տարեկան լինէր: Փոքրիկ դէմքով ու սեւ մեծ-մեծ տ-

չերով: Նրա երկար սեւ խոպոպները խճըռուած թափուել էին աչք ու երեսին. արտասուքը թշերին կաթիլ-կաթիլ մնացել էին դեռ ես, իսկ կոներով Մըռռանին պինդ գրկել բունել էր...

Հիւանդ աղջկայ նիչար, թոյլ ոտներն իրանց վրայ դարձրին Սամթօի աչերը: Ոտերն անզգույ կախ էին ընկել, առանց շարժուելու:

—Մայրիկ, ասաց հիւանդը թոյլ ձայնով, բայց այնքան սուր էր այդ ձայնը, որ թափանցեց Սամթիկի սրտի խորքը... Մայրիկ, այս կատուն ինձանից միք առնիկ. թողէք մնայ ինձ համար. նա ինձ համար այնպէս լաւ խաղեր է անում, ես նրան այնպէս եմ սիրում, որ առանց նրան չեմ կարող, շատ տխուր կը լինիմ... Մայրիկ, ջան-մայրիկ, միք առնիկ ինձանից, թողէք ինձ մօտ, գնեցէք կատուն մի կերպ, միայն ինձ միք բաժանիկ այս կատուից:

—Քնըռուշիկս, այդ կատուն մերը չէ, տեսնում ես, այս աղջիկն ինքն է նրան փոքրութիւնից կրթել, մեծացրել, ես ինչպէս քեզ համար առնեմ, նա ծախու չէ. տուր, տուր իրան տանի:

Հիւանդ աղջիկը մղկտալով սկսեց լալ
և այնպէս խղճալի հայեացքով նայեց Սա-
թիկի վրայ, որ Սաթիկի սիրտը կտոր-կտոր
եղաւ... նա սաստիկ խղճաց հիւանդ աղջկան.
Սաթիկի աչքերում կամաց-կամաց արտասու-
բի կաթիներ երևեցան... նա աչքերը չեր
կարողանում հեռացնել հիւանդից, Սաթիկի
սիրտը ճմլում էր. նա շուարած մնացել
էր:—Մըռռանն էլ նրան չեր զբաղեցնում
այդ ըոսկէին. նա ուզում էր հիւանդի սիր-
տըն առնել. նրա յորդ արտասուբը, նրա
մուայլ դալկացած դէմքը, ձայնը, առա-
ւել թոյլ ոտները ճնշում էին Սաթիկի
սիրտը:

—Մայրիկ, ասաց Սաթօն, այս աղջիկն
ինչո՞ւ է հիւանդ, ոտները՝ տես, ինչպէս են
թուլացած կախուել, նրան ի՞նչ է պատա-
հել:

—Նրա ոտներումը հիւանդութիւն կայ,
չի կարողանում ման գալ:

—Աքա նա ի՞նչպէս է այդին զնում,
անտառ ու ձորում վաղվզում:

—Նա որտեղից կարող է այդ անել, ոչ
մի տեղ չի զնում, ամբողջ օրն այդ կառրից

վեր չի կենում: Սաթօն կարեկցաբար աշ-
քերը յառած՝ աղջկանն էր նայում: նրան
զբաղեցրել էր հիւանդի ցաւը, մոտածում էր՝
միթե չի կարելի մի կերպ օգնել, բժշկել
նրան...

Մըռռանն արդէն արթնացել էր, նայում
էր մէկ այս, մէկ այն աղջկան. հիւանդը՝
կատուն կրծքին սեղմած՝ անմիտիթար լաց
էր լինում:

Սաթօն՝ գլուխը քաշ գցած՝ ամաչում
էր այլ ևս հիւանդ աղջկայ երեսին նայել:

—Բաւական է, գառնուկս, որքան լաց
եղար, թող կատուին, թող տանեն, ասաց
տանտիկինը: Յետոյ՝ դարձաւ դէպի տիկին
Սննան և ասաց. ներեցէք, ինդրեմ, խեղճը
շատ տկար է, այնքան թոյլ է, որ ամեն
մի դատարկ բան գրգռում, յուզում է նրան:
Այդ կատուին շատ է սիրել, ուրիշ էլ այն-
պիսի մի զուարձութիւն չունի, որ գոնէ
նրանով զբաղուի, խեղճն օրերով ստիպուած
պիտի մենակ նստի, չեմ՝ էլ իմանում, թէ
ինչո՞վ զբաղեցնեմ:

Դայեակը ուզեց խել հիւանդի ձեռ-
քից կատուն, բայց աղջիկն այնպէս ամուր

բռնել էր ու կպել նրանից, որ կարծես իրա մարմնուց մի կտոր կտրում լինէին:


—Թող, նանի ջան, թող, մի քիչ էլ մը նայ, թող, մէկ էլ համբուրեմ, հեծկըլտալով աղաչում էր հիւանդ աղջիկը. նանիկ, մի խլիլ ինձանից, հոգուդ մեռնեմ, թող նանիկ... նանիկ...

Սալթիկին դուր չեկաւ նանիկի խստութիւնը. նա պարզ հասկանում էր խեղճի ցաւը: Ի՞նչքան շատ է սիրում Մըռուանիա, մտածում էր ինքն իրան Սալթօն, որ ինքն էլ էր սիրում կատուին. ինքն էլ առանց Մըռուանին տխուր էր, բայց գոնէ, շարունակեց նա մտածել, կարող եմ փազել, թռչկոտել: Ես առողջ եմ, իսկ նա... մայրիկն ասաց, որ նա ման դալ չի կարողանում, նրա ոտները թոյլ են...

Սալթիկը գլուխը կամսց-կամսց բարձրացրեց: Հէնց որ տեսաւ նորից հիւանդի մղկտալը, սիրտը շարժուեց... «Ինչպէս սիրում, փաղարշում, համբուրում էր խեղճը արտասուրն աչերիցը առատ թափելով... —Եկ, փիսիկ ջան, ասում էր հիւանդը, եկ վերջին անգամ համբուրեմ... Սալթօն էլ չը

դիմացաւ, յանկարծ ընկաւ մօր գիրկը լալով.

—Մայրիկ, տուր, տուր նրան,—իրան



լինի Մըռուանը, չեմ ուզում, չէ, ընծայում եմ նրան. մայրիկ...

Տիկին Աննան զգացուած գրկեց և ջերմաջերմ համբուրեց.

—Ապրիս, ապրիս, աղջիկս, ասաց տիկին Աննան, աչքերիցը արտասուրի տարկաթիներ թափելով:

Հիւանդը թերահաւատ նայում էր Սաթիկի վրայ. Սաթօն աչերը սրբեց և արտասուախառն ծիծաղն երեսին ասաց.

—Վեր առ, քեզ եմ տալիս Մըռռանիս, ես չեմ ուզում, ես կարող եմ և մանգալ, և խաղալ, և վազվազել, և թռչկոտել, իսկ դուռը ինձ ուրիշ խաղալիկներ էլ շատ ունիմ:

Հիւանդը ուրախացաւ:

—Սիրունիկս, քոյրիկս, կանչեց հիւանդը, եկ մօտս, քեզ մի լաւ պաչեմ: Ե՞կ... ասաց նա և նրա աչքերն ուրախութիւնից փայլում էին. Սաթօն մօտեցաւ և նրանք համբուրուեցին:

—Կատուն քեզ եմ տալիս, միայն այն չար տղերանց ցոյց չը տաս: Սիրիր, պահպանիր, շատ լաւ կատու է, ես նրան այնքան սիրում էի... ասաց Սաթօն շոյելով իր մլաւուն բարեկամին:

—Կը սիրեմ, կը սիրեմ, ես հիմա էլ նրան շատ եմ սիրում, նա շատ լաւն է. նա այնպէս յետի ոտների վրայ կանգնում, այնպէս թաթ է տալիս, որ...

—Այդ բոլոն ես եմ նրան սովորացրել հպարտութեամբ ասաց Սաթօն. նա ուրիշ բաներ էլ է իմանում: Սալակ է քաշ տալիս, սուտամեռնուկ է տալիս:

Մըռռանն իր բոլոր հնարները ցոյց տուաւ: Աղջկէրը շատ բարեկամացան: Վճռեցին որ Սաթօն շուտ-շուտ գայ Մըռռանին տեսութիւն: Տանտիկինը շնորհակալութիւն յայտնեց տիկին Աննային, իսկ Սաթիկին համբուրեց:

—Խնչ թմիղիկ աղջիկ ունէք, ասաց տանտիկինը, կծեմ քու վառ թշերդ է... ասաց ու մի խոր ախ քաշեց:

«Երևի իրա հիւանդ աղջկայ համար էր այդ ախ քաշելը», մտածեց Սաթօն և սեղմեց նրա սպրթնած ձեռքը:

—Չեր աղջիկը նոյնպէս շուտով կառող ջանայ, չո միշտ ոտներն այդպէս թոյլ չեն մնալու:

— ԶԵ, անուշիկս, չէ, Վարսենիկն էլ եր-
բէք չի լաւանալ: Նրա ոտները կաթուա-
ծահար են եղած, նա ամբողջ կեանքում
կառքով պիտի ման գայ:


— Խոչ սարսափելի բան է, մտածեց
Սաթօն և մինչև տուն էլ, զանազան
խառն ի խուռն մտածմունքներով գլուխը
լի՝ գնաց առանց մօր չետ մի խօսք խօ-
սելու:



- | | | | | | | | | | | | | |
|-----|-------------------|----------------|---------------------|------------|-------------|----|----|----|----|------|----|------|
| 18. | Փնջիկ. | գրեց | Աղեքսանդր | Արտ- | | | | | | | | — 20 |
| | | բատեանց | . | . | . | . | . | . | . | . | . | |
| 19. | Նամուս. | վէպ. | գրեց | Շիրվանզադէ | . | . | . | . | . | 1 | — | |
| 20. | Ստեփ. | Տարօնեցւոյ | Ասողիան | Պատ- | | | | | | | | |
| | | մութիւն | տիեզերական. | երկ. | տալ | . | . | . | . | 2 | — | |
| 21. | Թիֆլիզեցւոյ | մտաւոր | կեանքը | Գ. | | | | | | | | |
| | Տէր-Աղեքսանդրեանի | . | . | . | . | . | . | . | . | 1 | 50 | |
| | Նոյնը | ընտիր | թղթի | վրայ. | . | . | . | . | . | 2 | 50 | |
| 22. | Ղեռնդ | պատմագիր | . | . | . | . | . | . | . | 2 | — | |
| 23. | Մըրազան | պատմ. | հին | ուլստի. | Սա- | | | | | | | — 30 |
| | հակ | քչն. | Սահակեանի. | . | . | . | . | . | . | | | |
| 24. | Նոյնը | ուսուցիչների | համար | . | . | . | . | . | . | 1 | 75 | |
| 25. | Սոկրատէս. | թարգ. | օր. | Թեկդի | Ստեփոյեան | . | — | 10 | | | | |
| 26. | Հ. | Պատմութիւն | Հայոց. | Ս. | Պալասանեանի | . | . | 1 | 50 | | | |
| 27. | Ուղեցոյց | գործն. | շերամապահու- | | | | | | | | | |
| | թեան. | Կ. | Մելիք-Շահնազարեանցի | . | . | . | . | . | . | — 40 | | |
| 28. | Ժամանակագրութիւն | հայոց | Յ. | Դարգելի | . | . | . | 1 | 25 | | | |
| 29. | Վարդ-Ռէխիլի. | Ե. | Սպիրի. | թարգ. | Ի. | Յ. | . | . | . | — 10 | | |
| 30. | Նալ | և | Դամայեանթի. | Ֆ. | Նմիդ- | | | | | | | |
| | տի. | թարգ. | Յ Լալայեանց | . | . | . | . | . | . | — 20 | | |
| 31. | Աստուած | գիտէ | արդարն | ու | մեղա- | | | | | | | |
| | ւորը. | Կորս | Տուսաոյի | թարգ. | Մ. | Ա. | . | . | . | — 7 | | |
| 33. | Հաւատարիմ | Սավիտրին. | Վայլդ- | | | | | | | | | |
| | նէր. | թարգ. | Փ. | Վարդանեան. | . | . | . | . | . | — 10 | | |
| 33. | Լինհարդ | և | Գերտրուդ. | Հենրիին | | | | | | | | |
| | Պետալոցցի. | թարգ | . | . | . | . | . | . | . | — 25 | | |
| 34. | Յաւելուած | ի | զիրս | պատմութեան | | | | | | | | |
| | Ստեփանոսի | Տարօնեցւոյ | Ասողիկ | | | | | | | | | |
| | կոչեցելոյ. | Նորայր | Բիւզանդացի. | . | . | . | . | . | . | — 20 | | |
| 35. | Նաւի | փոքրաւորը. | Մ. | Ռոզեն- | | | | | | | | |
| | հայնի. | թարգ. | Յ. | Լալայեան. | . | . | . | . | . | — 15 | | |
| 36. | Ուսենց | Յովսէփ. | Ե. | Սպիրի. | թարգ. | Ի. | Յ. | . | . | — 15 | | |
| 37. | Մեծապատիւ | մուրացկանները. | Յ. | | | | | | | | | |
| | Պարոնեանի. | . | . | . | . | . | . | . | . | — 40 | | |
| 38. | Ազգային | ջոջեր. | Յ. | Պարոնեանի | . | . | . | . | . | 1 | — | |
| 39. | Բլ-ա-բա, | Է. | Օժէշկոյի | . | . | . | . | . | . | — 15 | | |
| 40. | Շնիկ, | Կուլիկովայի | . | . | . | . | . | . | . | — 5 | | |
| 41. | Շնիկորինի | երեք | վրոյցներ | . | . | . | . | . | . | — 10 | | |
| 42. | Տարասկոնցի | Տարտարէնոր | . | . | . | . | . | . | . | — 40 | | |

- 43 Օրէշանի կոյս, Օստրովորակու — 25
 44 Արարատսկու կեանքը — 75
 45 Գաղափարական քահանայ, Պօտապենկօյի . . . — 75
 46 Բնտանիքի յոյսը, Անանենոկայի, թարգմ.
 օր. Վ., Տէր-Յովսէֆեանի — 10
 47 Հոսհոսի ձեռատերը Յ. Պարոնեանի. . . . 1 —
 48 Քիմիա Ռոսկոյի, թարգմ. Ա., Մելիք-Ալահ-
 վերդեան — 40
 49 Եջեղբինի երեք վէպիկ, թարգմ. Մ. Ղազարեանց — 15
 50 Սասմայ ծռեր, Գարեգին սարկաւագի — 50
 51 Զաւախքի բուրմունք, Ե. Լալայեանցի — 25
 52 Մտաւոր, բարոյական, Փիզիքտկան կրթու-
 թիւն, Սպենսերի. թարգ. Մ. Ղազար-
 եանցի (մամուլի տակ)
 53 Սըռւան, Օ. Ի. Նմիտդ. թարգ. Ա. Քալանթար. — 20
 Նոյն տեղում՝ վաճառում՝ են նաև Ընկերու-
 թեան հետեւեալ զրքերը.

- 1 Ուսումնարանների առողջապահութեան
 հարցեր, բժ. Ա. Բարայեանի 1 —
 2 Կրկեր և նոցա ազգեցութիւնը առողջութեան
 վրայ, բժ. Ա. Բարայեանի — 30
 3 Բոնի միութիւն Հայոց Լեհաստանի 2 —


 գինն է 20 կոյ. 

535

0004637

2013

ՀՀ Ազգային գրադարան



NL0004637

